


## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2012թ. Հունիսի 19-ին կայացած ԼՂՀ նախագահական ընտրությունները կազմակերպվել և անց են կացվել բարձր մակարդակով:

Եղել ենք Ստեփանակերտի թիվ 14, 33, 10, 30, 29, 2, 1 և 15 ընտրատեղամասերում: Ընտրատեղամասերը համապատասխանում էին պահանջված չափանիշներին: Ընտրական տեղամասերում տիրում էր հանգիստ մթնոլորտ: Հանձնաժողովի անդամներն անում էին հնարավոր ամեն ինչ ընտրություններն օրենքի պահանջներին համաձայն անցկացնելու համար: Հանձնաժողովի անդամների միջև խնդիրներ չէր առաջանում և բոլորն աշխատում էին հանուն արդար ու ժողովրդավար ընտրությունների:

Վստահված անձանց խոսքով՝ վստահված անձի իրավունքները ևս չեն ոտնահարվել և հակասություններ չեն եղել: Միջազգային դիտորդներն ակտիվ ու հետաքրքրված հետևում էին ընտրությունների ընթացքին:

Ընդհանուր առմամբ՝ ԼՂՀ նախագահական ընտրություններն անցան խաղաղ մթնոլորտում: Ընտրողների նկատելի ակտիվությունը փաստում էր այն, որ արցախցին անտարբեր չէ իր ճակատագրի նկատմամբ:



Գայանե Բաղրամյան

Նանար Սարգսյան

<<Հայկի Սերունդ>> ԵՀԿ

դիտորդներ